



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ N 0070/02/11թ.  
Նախագահող դատավոր՝ Հ. Աբրահամյան  
Դատավորներ՝ Հ. Խաչատրյան  
Կ. Սաղյան

Քաղաքացիական գործ N 0070/02/11թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

07-ին փետրվարի 2012թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ դատավոր՝  
դատավորներ՝

Ի. Կարապետյանի  
Ա. Հայրապետյանի  
Գ. Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Արտակ Գառնիկի Պետրոսյանի ընդդեմ Սեյրան Վասիլիի Բաղդասարյանի՝ 237.100 (երկու հարյուր երեսունյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. դեկտեմբերի 8-ի որոշման դեմ պատասխանող Ս. Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արտակ Գառնիկի Պետրոսյանը խնդրել է Սեյրան Վասիլիի Բաղդասարյանից բռնագանձել 237.100 ՀՀ դրամ, որից 226.000 ՀՀ դրամը՝ որպես նրա փոքրահասակ դուստր Ալինա Բաղդասարյանի պատճառած վնասի գումար և 11.100 ՀՀ դրամը՝ որպես կատարած փորձաքննության գումար:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի /այսուհետ, նաև՝ Դատարան/ 2011թ. մայիսի 11-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 7.750 ՀՀ դրամի չափով՝ որպես պատճառված վնասի, 2.775 ՀՀ դրամ՝ որպես գործի քննության հետ կապված գրավոր ապացույց ձեռք բերելու համար կատարված ծախսի և 145 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումարներ:

Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել հայցվոր Ա.Պետրոսյանը և պատասխանող Ս.Բաղդասարյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը «այսուհետ՝ Վերաքննիչ դատարան» 2011թ. հուլիսի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակիորեն՝ Դատարանի 2011թ. մայիսի 11-ի վճիռը ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել է նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Դատարանի 2011թ. սեպտեմբերի 29-ի վճռով Ա.Պետրոսյանի հայցապահանջը՝ 237.100 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին մերժվել է:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել հայցվոր Ա.Պետրոսյանը՝ խնդրելով բեկանել Դատարանի վճիռը և անչափահաս Ա.Բաղդասարյանի ծնողներից իր օգտին բռնագանձել 237.100 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը 2011թ. դեկտեմբերի 8-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանել և փոփոխել է Դատարանի 2011թ. սեպտեմբերի 29-ի վճիռը, հայցը բավարարել մասնակիորեն՝ 164.870 ՀՀ դրամի չափով, որից 150.000 ՀՀ դրամը՝ պատճառված վնասի դիմաց փոխհատուցման, իսկ 14.870 ՀՀ դրամը՝ դատական ծախսերի գումարներ:

Նշված որոշման դեմ 2011թ. դեկտեմբերի 26-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել պատասխանող Ս.Բաղդասարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերով:

Բողոքաբերը գտնում է, որ կիրառման չի ենթարկվել այն օրենքը, որը պետք է կիրառվեր ու ապացույցների գնահատումն օբյեկտիվ և բազմակողմանի չի իրականացվել: Գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները և չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 2-րդ մասի, 1073-րդ հոդվածի և 1076-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, որն ազդել է գործի ելքի վրա:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն, Գ.Պետրոսյանի գործողությունները՝ ավտոմեքենան առանց կողպելու և այն գործարկելու բանալին վառոցի վրա թողնելը, նպաստել են հայցվորին պատկանող մեքենայի վթարի առաջացմանը, սակայն չեն հանդիսացել օբյեկտիվորեն գործողություն ունեցող և միակ պատճառական կապը: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ Գ.Պետրոսյանը խախտել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ԼՂՀ օրենքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի «գ» կետի և 37-րդ հոդվածի պահանջները:

Նշվածից ելնելով բողոքաբերը գտնում է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի համաձայն՝ հայցվոր Ա.Պետրոսյանի գույքին պատճառված վնասի համար պետք է համապարտ պատասխանատվություն կրեն մանկահասակ Ա.Բաղդասարյանի ծնողները և Գ.Պետրոսյանը: Գտնում է, որ Վերաքննիչ դատարանն ի նկատի չի առել Գ.Պետրոսյանի մեղքի ակնհայտ լինելը և չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Հաշվի չի առվել նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, մասնավորապես այն հանգամանքը, որ Գ.Պետրոսյանի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, և հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կապված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից: Ուստի, անհիմն և սխալ է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ հայցվորին

պատճառած վնասի հատուցման պարտականությունը կրում են միայն անչափահաս Ա.Բաղդասարյանի ծնողները:

Բողոքաբերը գտնում է նաև, որ վնասի հատուցման չափի մասին Վերաքննիչ դատարանի եզրակացությունը նույնպես սխալ է, քանի որ հիմք է վերցվել ավտովերանորոգող վարպետ Ռ.Հակոբյանի ցուցմունքում նշված 150.000 ՀՀ դրամը՝ որպես կատարած աշխատանքի վարձավճար, այն դեպքում, որ նա նկատի է ունեցել մեքենայի նորոգման համար պահանջվող ամբողջ գումարը: Հաշվի առնելով մեղքի աստիճանն ու վնասի չափը՝ իրենց կողմից արդեն վճարվել է 65.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 29-ի վճռին:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 2008 թվականի դեկտեմբերի 27-ի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ «Օպել Աստրա» մակնիշի 09 ԼՍ 896 պետհամարանիշի ավտոմեքենան պատկանում է Արտակ Պետրոսյանին, որի թույլտվությամբ այն օգտագործում էր նրա հայր՝ Գառնիկ Պետրոսյանը:

2. 2010 թվականի դեկտեմբերի 8-ին, ժամը 16.00-16.30-ի սահմաններում Գ.Պետրոսյանը նշված ավտոմեքենան կանգնեցրել է Ստեփանակերտ քաղաքի Ստեփ ԳԷՍ-ի փողոցում իր սեփական տան մոտ և, այն առանց հսկողության թողնելով, առանց դռները փակելու, բանալին վառոցի փականքում թողնելով, գնացել է տուն:

3. Նույն օրը ժամը 16.30-ի սահմաններում նշված ավտոմեքենան բախվել է կանգնելու տեղից մոտ 100 մետր հեռավորության վրա տեղակայված խանութի պատին: Ռ.Հակոբյանի կողմից վթարված ավտոմեքենայից դուրս են բերվել հարևանությամբ բնակվող փոքրահասակ Ալինա Բաղդասարյանը՝ ծնված 16.11.2006թ. և Ռաֆայել Մովսեսյանը՝ ծնված 26.01.2008թ.: Ա.Բաղդասարյանը դուրս է բերվել վարորդի, իսկ Ռ.Մովսեսյանը՝ դիմացի նստատեղից:

4. Փոքրահասակ երեխաները մարմնական վնասվածք չեն ստացել, պատահարի մասին ոստիկանություն չի հայտնվել, դեպքի վայրի զննություն չի կատարվել, ավտոմեքենայի տեխնիկական վիճակի զննության արձանագրություն քաղաքացիական գործի նյութերում առկա չէ:

5. Ալինա Բաղդասարյանի ծնողներն են Սեյրան Բաղդասարյանը և Ռոմելա Մովսիսյանը /ծննդյան վկայական ԱԱ N 128300/, Ռաֆայել Մովսեսյանի ծնողներն են Սասուն Մովսեսյանը և Թեհմինե Մովսեսյանը /ծննդյան վկայական ԱԱ N 195359/:

6. Պատասխանող Ա.Բաղդասարյանը պատճառված վնասը վերականգնելու համար վճարել է 15.000 ՀՀ դրամ և տրամադրել՝ 50.000 ՀՀ դրամ արժողությամբ պահեստամասեր:

7. Հայցվոր Ա.Պետրոսյանի և «ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ի միջև 2010թ. դեկտեմբերի 20-ին կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա իրականացվել է ապրանքագիտական փորձաքննություն, որի հետևությունների համաձայն՝ «Օպել Աստրա» մակնիշի 09 ԼՍ 896 պետհամարանիշի ավտոմեքենայի վնասի չափը կազմում է 291.000 ՀՀ դրամ: Փորձաքննության արժեքը կազմում է 11.100 ՀՀ դրամ:

8. Դատարանի դատական նիստի արձանագրության համաձայն՝

-փորձագետ Է.Իսրայելյանը բացատրություն է տվել, որ չի կարող ասել՝ մեքենայի վնասն այդ դեպքից հետո է առաջացել, թե ոչ, իսկ դեպքն իրեն բանավոր էր ներկայացվել,

-վկա Ռ.Հակոբյանը ցուցմունք է տվել, որ ավտոմեքենայի վերանորոգման աշխատանքները կատարվել են իր կողմից, 100.000 ՀՀ դրամի հաշվել էր անհրաժեշտ նյութերը, 100.000 ՀՀ դրամ էլ աշխատանքի վարձատրությունը և, որպես հարևան, զիջել է 20.000 ՀՀ դրամ: Իր աշխատանքի դիմաց ստացել է 80.000 ՀՀ դրամ, սակայն իր կատարած

աշխատանքը կազմում է 150.000 ՀՀ դրամ: Ընդամենը մեքենան վերանորոգելու համար ծախսվել է 187.000 ՀՀ դրամ:

-երրորդ անձ Գ.Պետրոսյանը ցուցմունք է տվել, որ ավտոմեքենան կանգնեցնելուց փոխանցման տուփը «P»-ի վրա էր դրել, արգելակիչը քաշել: Իսկ երբ դուրս էր եկել տնից և մոտեցել վթարված ավտոմեքենային, արգելակիչը քաշած էր, իսկ փոխանցման տուփը՝ «D»-ի վրա: Իր մեղքն ընդունում է, որ «բանալին թողել է մեքենայի վրա»:

9. Դատարանը 2011թ. սեպտեմբերի 29-ի վճռով Ա.Պետրոսյանի հայցը մերժել է այն հիմնավորմամբ, որ տրանսպորտային միջոցների սեփականատերերը կամ դրանց օրինական հիմքերով տիրապետող անձինք պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները, որոնք կբացառեն տրանսպորտային միջոցի ինքնաբերաբար կամ փոքրահասակների ներգործության հետևանքով շարժումը, իսկ Գ.Պետրոսյանը չի ձեռնարկել նշված միջոցները, ինչը դիտարկվել է որպես կոպիտ անզգուշության դրսևորում, որը նպաստել է վնասի առաջացմանը:

10. Վերաքննիչ դատարանը 2011թ. դեկտեմբերի 8-ի որոշմամբ հայցվոր Ա.Պետրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն այն հիմնավորմամբ, որ Գ.Պետրոսյանի գործողությունները նպաստել են հայցվորին պատկանող մեքենայի վթարի առաջացմանը, սակայն չեն հանդիսացել օբյեկտիվորեն գոյություն ունեցող և միակ պատճառական կապը, ուստի պատճառված վնասի հատուցման պարտականությունը կրում են միայն անչափահաս Ալինա Բաղդասարյանի ծնողները: Հայցը հիմնավորված է համարվել 150.000 ՀՀ դրամի չափով, քանի որ պատասխանող Ս.Բաղդասարյանն արդեն իսկ տրամադրել է փոխարինման ենթակա պահեստամասերը, իսկ վերանորոգման աշխատանքների արժեքը, ըստ դատաքննության ներգրավված վկա՝ այդ աշխատանքները կատարած վարպետ Ռ.Հակոբյանի ցուցմունքների՝ կազմել է 150.000 ՀՀ դրամ:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ այն դեպքերում, երբ նույն օրենսգրքի առաջին հոդվածում նախատեսված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը, նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող քաղաքացիական օրենսդրության նորմերը (օրենքի անալոգիա):

Օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են՝ ելնելով քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից (իրավունքի անալոգիա):

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

Վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1067-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ, պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը դատարանը կարող է նաև լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից՝ սույն օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով:

Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրի սեփականատերը պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, եթե ապացուցում է, որ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով: Նման դեպքերում առավել վտանգի աղբյուրի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են աղբյուրն ապօրինի տիրապետած անձինք: Աղբյուրի սեփականատիրոջ տիրապետումից այդ աղբյուրի ապօրինի վերցնելու մեջ նրա մեղքի առկայության դեպքում պատասխանատվությունը կարող է դրվել ինչպես առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ, այնպես էլ այն ապօրինի ձեռք բերողի վրա:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե տուժողի կուպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:

Տուժողի կուպիտ անզգուշության առկայության և վնաս պատճառողի մեղքի բացակայության այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ, հատուցման չափը կարող է նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ այն անձինք, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ, պատասխանատվություն են կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար այն ապօրինի ձեռք բերողի հետ միասին, եթե աղբյուրը դուրս է եկել նրանց տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, սակայն այդ աղբյուրը ապօրինի վերցնելու մեջ առկա է նաև նրանց մեղքը: Նշված անձինք պատասխանատվությունը կրում են բաժնային կարգով, կախված ամեն մեկի մեղքի աստիճանից:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ԼՂՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Տրանսպորտային միջոցի սեփականատերը պարտավոր է ապահովել տրանսպորտային միջոցի տեխնիկապես սարքին վիճակը՝ համաձայն տրանսպորտային միջոցի շահագործումը թույլատրող պայմանների ու շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկի:

2. Տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է՝ ...

դ. ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում՝

1. անմիջապես կանգնեցնել տրանսպորտային միջոցը, ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված կարգով միացնել վթարային լուսային ազդանշանը և չտեղաշարժել ինչպես տրանսպորտային միջոցը, այնպես էլ վթարի հետ կապված առարկաները ...

4. պատահարի մասին հայտնել ոստիկանություն և սպասել ոստիկանության ծառայողների ներկայանալուն ...

4. Եթե ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տուժողներ չկան, ապա վարորդները, պատահարի իրավիճակի գնահատման փոխհամաձայնությամբ, կարող են նախօրոք կազմել ու ստորագրել վթարի սխեման, ներկայանալ մոտակա ճանապարհապարեկային ծառայության պահակետ կամ ոստիկանության տարածքային մարմին՝ պատահարը սահմանված կարգով ձևակերպելու համար ...

7. Վարորդին արգելվում է ...

գ. լքել իր տեղը կամ թողնել տրանսպորտային միջոցը, եթե նրա կողմից չեն ձեռնարկվել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք բացառում են տրանսպորտային միջոցի ինքնաբերաբար շարժումը կամ դրա օգտագործումը իր բացակայության ժամանակ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը հայցը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ տրանսպորտային միջոցը օրինական հիմքով տիրապետող անձը գործով հաստատված պայմաններում պետք է ձեռնարկեր բոլոր միջոցները, որոնք կբացառեին տրանսպորտային միջոցի ինքնաբերաբար և /կամ/ փոքրահասակների ներգործության հետևանքով ավտոմեքենայի շարժումը: Մինչդեռ, հայցվորի կողմում երրորդ անձ՝ Գ.Պետրոսյանը չի ձեռնարկել բավարար միջոցներ, որոնք կբացառեին տրանսպարտային միջոցի ինքնաբերաբար և /կամ/ փոքրահասակների ներգործության հետևանքով ավտոմեքենաների շարժումը, ինչը դիտարկել է որպես կոպիտ անզգուշության դրսևորում, որը նպաստել է վնասի առաջացմանը: Դատարանը հիմք է ընդունել նաև այն, որ պատահարի մասին ոստիկանությանը չի հայտնվել, փոքրահասակ Ա.Բաղդասարյանի և Ռ.Պետրոսյանի հակաիրավական գործողությունների բնույթի և ծավալի մասին գործով ապացույցներ առկա չեն, իսկ անչափահաս Ա.Բաղդասարյանի ծնող Ս.Բաղդասարյանը արդեն իսկ վճարել է 65.000 ՀՀ դրամ՝ պատճառած վնասը հատուցելու համար:

Վերաքննիչ դատարանը իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ Գ.Պետրոսյանի գործողությունները նպաստել են հայցվորին պատկանող մեքենայի վթարի առաջացմանը, սակայն չեն հանդիսացել օբյեկտիվորեն գոյություն ունեցող և միակ պատճառական կապը, ուստի պատճառված վնասի հատուցման պարտականությունը կրում են միայն անչափահաս Ալինա Բաղդասարյանի ծնողները:

Գերագույն դատարանը Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումը գտնում է անհիմն և հակասական, քանի որ նշելով, որ Գ.Պետրոսյանի գործողությունները նպաստել են հայցվորին պատկանող մեքենայի վթարի առաջացմանը, Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել առավել վտանգի աղբյուրը տիրապետումից ապօրինի վերցնելու հարցում այն օրինական հիմքով տիրապետող՝ Գ.Պետրոսյանի մեղքի աստիճանը: Մինչդեռ օրենսդիրը կարևորել է առավել վտանգի աղբյուրի օրինական տիրապետողի մեղքի առկայության հանգամանքը, իսկ տվյալ դեպքում այն ակնհայտ է և դրսևորվել է անզգուշությամբ: Վերաքննիչ դատարանն իր վերլուծություններում չի անդրադարձել նաև այն հանգամանքին, որ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվությունը սովորական քաղաքացիական պատասխանատվության համեմատ այլ է:

Գործով հաստատված է, որ տրանսպորտային միջոցի սեփականատեր Ա.Պետրոսյանը և օրինական տիրապետող Գ.Պետրոսյանը պատահարի մասին չեն հայտնել համապատասխան լիազոր մարմնին, այն սահմանված կարգով չի ձևակերպվել, դեպքի վայրը և տրանսպորտային միջոցը սահմանված կարգով զննության չեն ենթարկվել, ինչի արդյունքում նաև սույն գործի քննությամբ հստակ և հիմնավոր չի պարզվել պատճառված

վնասի չափը և պատահարի առաջացման բոլոր օբյեկտիվ պատճառներն ու հանգամանքները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

Նույն օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվորեն հետազոտելով գործում եղած բոլոր ապացույցները, Գերագույն դատարանը գտնում է, որ Դատարանը ճիշտ է հանգել այն եզրակացության, որ հայցվոր Ա.Պետրոսյանին պատկանող տրանսպորտային միջոցի վնասը պատճառվել է փոքրահասակ Ա.Բաղդասարյանի և երրորդ անձ՝ առավել վտանգի աղբյուրը օրինական հիմքով տիրապետող՝ Գ.Պետրոսյանի գործողությունների հետևանքով, քանի որ առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել նրա տիրապետումից ոչ միայն փոքրահասակ Ա.Բաղդասարյանի գործողությունների հետևանքով, այլև նրա մեղքով: Նա բանալին կողպեքում մեքենան թողել է փողոցում առանց հսկողության ու առանց դուռը կողպելու դուրս է եկել ավտոմեքենայից և հեռացել, չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ, որոնք կբացառեին տրանսպորտային միջոցի ինքնաբերաբար շարժումը կամ դրա օգտագործումն իր բացակայության ժամանակ: Նման պայմաններում տրանսպորտային միջոցի վարորդը չի ազատվում պատասխանատվությունից, իսկ տվյալ դեպքում պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում են ինչպես փոքրահասակ Ա.Բաղդասարյանի ծնողները, այնպես էլ Գ.Պետրոսյանը: Ընդ որում, Գ.Պետրոսյանի գործողությունները տվյալ պարագայում հանդիսանում են կոպիտ անզգուշություն:

Այսպիսով, Գերագույն դատարանն օրինական և հիմնավոր է համարում Դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 29-ի վճռի վերը նշված եզրահանգումները և հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական նորմերի խախտմամբ, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Գերագույն դատարանը չի անդրադարձնում պատճառված վնասի չափի հարցին՝ դրա վերաբերյալ գործում առկա ապացույցների հակասական և բավարար հիմնավորված չլինելու

պատճառով, իսկ սույն որոշումը կայացնելիս հաշվի է առնում, որ վնասը պատճառվել է առանց դիտավորության և փոքրահասակի կողմից:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և ԼՂՀ առաջին աստիճանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Գերագույն դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Գերագույն դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԼՂՀ առաջին աստիճանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Սեյրան Վասիլիի Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. դեկտեմբերի 8-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011թ. սեպտեմբերի 29-ի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ